

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2003 թվականի սեպտեմբերի 22-ի

թիվ 1831/2003/ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Կենդանական ծագում ունեցող կերի մեջ հավելումների օգտագործման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տերստ)

(ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 29)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
►M1	<u>Հանձնաժողովի 2005 թվականի մարտի 4-ի թիվ 378/2005 կանոնակարգով (ԵՀ)</u>	L 59	8	05.03 2005
►M2	<u>Հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 12-ի թիվ 386/2009 կանոնակարգով (ԵՀ)</u>	L 118	66	13.05 2009
►M3	<u>Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 596/2009 կանոնակարգով (ԵՀ)</u>	L 188	14	18.07 2009
►M4	<u>Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 կանոնակարգով (ԵՀ)</u>	L 229	1	01.09 2009

▼B

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2003 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ
1831/2003 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)**

Կենդանական ծագում ունեցող կերի մեջ հավելումների օգտագործման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» համաձայնագիրը եւ,
մասնավորապես, դրա 37-րդ եւ 152 (4) (բ) հոդվածները,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,
հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը (2),
Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3),
Քանի որ

1) անասնապահական մթերքների արտադրությունը շատ կարեւոր տեղ է զբաղեցնում
Համայնքի գյուղատնտեսությունում: Բավարար արդյունքները մեծապես կախված են
անվտանգ եւ բարձր որակի անասնակերի օգտագործումից,

2) անվտանգ եւ առողջարար սննդամթերքի ու անասնակերի ազատ տեղաշարժն էական
ասպեկտ է ներքին շուկայում եւ զգալիորեն նպաստում է քաղաքացիների
առողջությանն ու բարեկեցությանը, ինչպես նաեւ նրանց սոցիալական եւ տնտեսական
շահերին,

3) Համայնքի քաղաքականություններն իրականացնելիս պետք է ապահովվի մարդկանց
կյանքի եւ առողջության պաշտպանության բարձր մակարդակը,

4) մարդկանց եւ կենդանիների առողջության ու միջավայրի պաշտպանության նպատակով անասնակերի մեջ սննդային հավելումները պետք է անցնեն անվտանգության գծով գնահատում Համայնքի ընթացակարգի հիման վրա՝ նախքան Համայնքում դրանց շուկայահանումը, օգտագործումը կամ մշակումը: Քանի որ ընտանի կենդանիների կերը մարդկանց սննդամթերքի շղթայի մաս չի կազմում եւ վարելահողի վրա չունի բնապահպանական ազդեցություն, ընտանի կենդանիների կերի մեջ հավելումների համար հատուկ դրույթները նպատակահարմար են,

5) Եվրոպական Պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի սննդամթերքի օրենքի ընդհանուր սկզբունքները սահմանող, Սննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմինը հաստատող եւ սննդամթերքի անվտանգության հարցերով ընթացակարգեր սահմանող՝ թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 11-րդ հոդվածում ամրագրված Համայնքում սննդամթերքի վերաբերյալ օրենքի սկզբունքն է, (4), որ Համայնքում շուկայահանման համար ներկրված սնունդը եւ կերը պետք է համապատասխանեն Համայնքի օրենսդրության համապատասխան պահանջներին կամ Համայնքի կողմից ճանաչված՝ առնվազն այդ պահանջներին համարժեք պայմաններին: Հետեւաբար, անհրաժեշտ է կենդանական ծագում ունեցող կերի մեջ օգտագործման համար երրորդ երկրներից հավելումների ներմուծումները ենթարկել Համայնքում արտադրվող հավելումների նկատմամբ կիրառվող համարժեք պահանջներին,

6) Համայնքի կողմից մարդկանց, կենդանիների առողջության եւ միջավայրի հետ կապված գործողությունները պետք է հիմնված լինեն նախազգուշական սկզբունքի վրա,

7) համաձայն Պայմանագրի 153-րդ հոդվածի՝ Համայնքը պետք է նպաստի սպառողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խթանմանը,

8) Խորհրդի՝ կերային նյութերի մեջ հավելումների վերաբերյալ (5) 1970 թվականի նոյեմբերի 23-ի 70/524/ԵՏՀ հրահանգի կիրառման փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ

է վերանայել հավելումների մասին բոլոր կանոնները, որպեսզի հաշվի առնվի կենդանիների, մարդկանց եւ միջավայրի պաշտպանության ավելի բարձր աստիճան ապահովելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել այն փաստը, որ տեխնոլոգիաների առաջընթացը եւ գիտության մեջ զարգացումները մատչելի են դարձրել հավելումների այնպիսի նոր տեսակներ, ինչպիսիք սիլոսային հավելումները կամ ջրի մեջ օգտագործվող հավելումներն են,

9) սույն Կանոնակարգը նաեւ կարգավորում է վերջնական սպառողին վաճառված հավելումների խառնուրդները, իսկ այդ խառնուրդների շուկայահանումն ու օգտագործումը պետք է համապատասխանեն թույլտվության մեջ յուրաքանչյուր մեկ հավելման համար սահմանված պայմաններին,

10) պրեմիքսները չպետք է համարվեն որպես հավելման սահմանմամբ կարգավորվող պատրաստուկներ,

11) այս բնագավառում հիմնական սկզբունքը պետք է լինի այն, որ միայն սույն Կանոնակարգով նախատեսված ընթացակարգի համաձայն հաստատված հավելումները կարող են շուկայահանվել, օգտագործվել եւ մշակվել թույլտվության մեջ անասնակերի արտադրության համար սահմանված պայմաններով,

12) թույլտվության նպատակով գնահատման ընթացակարգը հեշտացնելու համար պետք է սահմանվեն սննդային հավելումների կատեգորիաները: Ամինաթթուները, դրանց աղերը եւ անալոգները, ինչպես նաեւ միզանյութը եւ իր ածանցյալները, որոնք ներկայումս կարգավորվում են Խորհրդի 1982 թվականի հունիսի 30-ի կենդանական ծագում ունեցող կերի մեջ օգտագործվող որոշ ապրանքների մասին 82/471/ԵՏՀ հրահանգով (6), պետք է ներառվեն որպես սննդային հավելումների կատեգորիա եւ, հետեւաբար, փոխանցվեն այդ Հրահանգի ոլորտից սույն Կանոնակարգ,

13) սննդային հավելումների թույլտվության համար դիմումների վերաբերյալ կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնվեն սննդի արտադրման եւ այլ կենդանիների համար պահանջվող տարբեր փաստաթղթեր,

14) սննդային հավելումների ներդաշնակեցված փորձաքննություն ապահովելու համար նման փորձաքննությունը պետք է կատարվի թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) Աննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմնի կողմից: Դիմումները պետք է հավելվեն մնացորդների վերաբերյալ ուսումնասիրություններով՝ Մնացորդների առավելագույն սահմանների (ՄԱՍ) սահմանումը գնահատելու նպատակով,

15) Հանձնաժողովը, համագործակցելով Սննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմնի հետ, պետք է հաստատի սննդային հավելումների թույլտվության համար ուղեցույցներ: Այս ուղեցույցները հաստատելիս ուշադրություն պետք է դարձվի մեծից փոքր տեսակների վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքների վրա հիմնվելու հնարավորությանը,

16) անհրաժեշտ է նաեւ ապահովել թույլտվության պարզեցված ընթացակարգ այնպիսի հավելումների համար, որոնք հաջողությամբ անցել են Խորհրդի՝ «Մարդկանց սպառման համար նախատեսված կերերի մեջ օգտագործելու թույլատրելի կերային հավելումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին» 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/107/ԵՏՀ հրահանգով նախատեսված՝ կերի օգտագործման համար թույլտվության ընթացակարգով (7),

17) ընդունված է, որ միայն ռիսկի փորձաքննությունը չի կարող, որոշ դեպքերում, ապահովել ամբողջ տեղեկատվությունը, որի հիման վրա պետք է կայացվի ռիսկի կառավարման վերաբերյալ որոշում, եւ որ խնդրի վերաբերյալ պետք է իրավունքների շրջանակներում հաշվի առնվեն այլ գործոններ՝ ներառյալ սոցիալական, տնտեսական կամ բնապահպանական գործոնները, վերահսկումների կիրառելիությունը, ինչպես նաեւ կենդանու կամ կենդանական ծագում ունեցող ապրանքները սպառողի օգուտը:

Հետեւաբար, հավելման թույլտվությունը պետք է տրվի Հանձնաժողովի կողմից,

18) կենդանիների բարեկեցության պաշտպանության եւ սպառողների անվտանգության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար դիմողներին պետք է խրախուսել փոքր տեսակների համար փորձել երկարաձգել թույլտվությունը՝ տրամադրելով նրանց տվյալների լրացուցիչ մեկ տարվա պաշտպանություն՝ բացի տվյալների 10 տարվա պաշտպանությունից, որն ունեն այն բոլոր տեսակները, որոնց համար հավելումը թույլատրելի է,

19) սննդային հավելումների թույլտվության իրավասությունը եւ դրանց օգտագործման համար պայմանների ստեղծումը, ինչպես նաեւ թույլ տված սննդային հավելումների մատյանի պահպանումը եւ հրապարակումը պետք է վերապահվեն Հանձնաժողովին, ըստ այն ընթացակարգի, որով անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ սերտ համագործակցությունը երաշխավորվում է Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի շրջանակներում,

20) անհրաժեշտ է թույլտվության իրավատիրոջը ներկայացնել, ըստ անհրաժեշտության, շուկայահանումից հետո դիտարկման ծրագիր իրականացնելու պարտավորությունը՝ սննդային հավելումների օգտագործումից հետո մարդկանց կամ կենդանիների առողջության, կամ միջավայրի վրա ուղղակի կամ անուղղակի, անմիջական, հետաձգված կամ չնախատեսված ազդեցությունը հետազոտելու եւ բացահայտելու համար, օգտագործելով ապրանքների հետազոծման այնպիսի շրջանակ, որը նման է այլ ոլորտներում արդեն գոյություն ունեցող շրջանակներին եւ որը համապատասխանում է սննդի վերաբերյալ օրենքում սահմանված հետազոծման պահանջներին,

21) տեխնոլոգիաների առաջընթացը եւ գիտության մեջ զարգացումները հաշվի առնելու թույլտվության համար անհրաժեշտ է պարբերաբար վերանայել սննդային հավելումների թույլտվությունները: Սահմանափակ ժամանակահատվածում թույլտվություններով պետք է արտոնվի այս վերանայումը,

22) պետք է հաստատվի թույլատրելի կերային հավելումների մատյան՝ ապրանքին հատուկ տեղեկատվությամբ եւ հայտնաբերման մեթոդներով: Ոչ գաղտնի տվյալները պետք է մատչելի դարձվեն հանրության համար,

23) անհրաժեշտ է հաստատել անցումային կանոններ՝ հաշվի առնելու համար շուկայում արդեն գոյություն ունեցող հավելումները եւ այն հավելումները, որոնք թույլատրելի են 70/524/ԵՏՀ հրահանգով, 82/471/ԵՏՀ հրահանգով ներկայումս թույլատրելի ամինոթթուները, դրանց աղերը եւ անալոգները, միզանյութն ու դրա ածանցյալները, եւ սիլոսի հարուցիչները, ինչպես նաեւ այն հավելումները, որոնց համար թույլտվության ընթացակարգն ընթացքի մեջ է: Մասնավորապես, նպատակահարմար է ապահովել, որ նման ապրանքները կարողանան մնալ շուկայում, միայն եթե դրանց գնահատման համար ծանուցումը Հանձնաժողովին տրամադրվել է սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց մեկ տարվա ընթացքում,

24) առանց 70/524/ԵՏՀ հրահանգի համաձայն տրամադրվող թույլտվության՝ ներկայումս Համայնքում շուկահայանվում եւ օգտագործվում են սիլոսի հավելումները: Թեեւ անհրաժեշտ է կիրառել սույն Կանոնակարգի դրույթները նման նյութերի նկատմամբ՝ դրանց բնույթի եւ օգտագործման առումով, նպատակահարմար է կիրառել նույն անցումային կարգավորումները: Այսպիսով, հնարավոր կլինի ստանալ ներկայումս օգտագործվող նյութերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները եւ հաստատել դրանց ցանկը, որը թույլ կտա ձեռնարկել անվտանգության միջոցառումներ, ըստ անհրաժեշտության, այն նյութերի համար, որոնք չեն համապատասխանում սույն Կանոնակարգի 5-րդ հոդվածում նշված թույլտվության չափորոշիչներին,

25) պլանավորման հարցերով գիտական խորհուրդը, 1999 թվականի մայիսի 28-ի իր եզրակացության մեջ նշել է. «ինչ վերաբերում է հակամիկրոբիալների՝ որպես աճը խթանող հարուցիչների օգտագործմանը, հարուցիչների օգտագործումն այն դասերից, որոնք օգտագործվում են կամ հնարավոր է օգտագործվեն մարդկանց բժշկության կամ անասնաբուժության մեջ (օրինակ՝ եթե կա բակտերիալ վարակները (ինֆեկցիա)

բուժելու համար օգտագործվող դեղերի դեմ դիմադրության ընտրելու ռիսկ), պետք է հնարավորինս շուտ եւ վերջին հաշվով վերացվի: Պլանավորման հարցերով գիտական խորհրդի 2001 թվականի մայիսի 10-ին եւ 11-ին հակամիկրոբիալ դիմադրության վերաբերյալ ընդունված երկրորդ եզրակացությամբ հաստատվեց այդ հակամիկրոբիալներն այլընտրանքային ապրանքներով փոխարինելու համար բավարար ժամանակ տրամադրելու անհրաժեշտությունը: «Այդ նպատակով, վերացման գործընթացը պետք է պլանավորվի եւ համակարգի, քանի որ կտրուկ գործողությունները կարող են բացասական հետեւանքներ ունենալ կենդանիների առողջության վրա»,

26) հետեւաբար, անհրաժեշտ է նշանակել ամսաթիվ, որից հետո կարգելվի դեռեւս որպես աճը խթանող հարուցիչներ օգտագործման համար թույլատրելի հակաբիոտիկների օգտագործումը, թույլ տալով բավարար ժամանակ՝ այդ հակաբիոտիկները փոխարինելու նպատակով այլընտրանքային ապրանքների աճի համար: Պետք է նաեւ կազմվի դրույթ՝ որպես սննդային հավելումներ օգտագործվող հավելյալ հակաբիոտիկների թույլտվությունն արգելելու համար: Որպես աճի խթանողներ օգտագործվող հակաբիոտիկների վերացման շրջանակում եւ կենդանիների առողջության պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար Սննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմնին կխնդրվի նախքան 2005թվականը վերանայել այլընտրանքային նյութերի մշակման եւ այլընտրանքային մեթոդների կառավարման, սնուցման, հիգիենայի եւ այլնի մեջ արձանագրված առաջընթացը,

27) կոկցիդիոստատիկ եւ հիստոմոնոստատիկ հետեւանքներով որոշ նյութեր պետք է համարվեն որպես սույն Կանոնակարգի նպատակներով սննդային հավելումներ,

28) ապրանքի մանրամասն պիտակավորում պահանջվում է, քանի որ դա վերջնական սպառողին թույլ է տալիս ընտրություն կատարել փաստերի լիակատար իմացությամբ, ավելի քիչ խոչընդոտներ է ստեղծում առետրի համար եւ հեշտացնում է ազնիվ գործարքները: Այս առումով՝ ընդհանրապես նպատակահարմար է, որ սննդային հավելումների նկատմամբ կիրառվող պահանջները լինեն այն նույն պահանջները,

որոնք կիրառվում են սննդային հավելումների նկատմամբ: Հետեաբար, նպատակահարմար է ապահովել, որ համային միացությունների նկատմամբ կիրառվող պարզեցված պիտակավորման պահանջները նման լինեն սննդային համերի նկատմամբ կիրառվող պահանջներին: Սակայն, սա չպետք է հակասի առանձին հավելումների թույլտվության համար հատուկ պիտակավորման պահանջների ապահովման հնարավորությանը,

29) Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի «Գենետիկորեն փոփոխված սննդի և անասնակերի մասին» թիվ 1829/2003 ԵՀ կանոնակարգով (8) նախատեսվում է գենետիկորեն փոփոխված սննդի և անասնակերի, այդ թվում՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմներից բաղկացած, դրանց պարունակությամբ կամ դրանցից արտադրված կերային հավելումների շուկայահանման թույլտվության ընթացակարգը: Քանի որ նշված կանոնակարգի նպատակները տարբերվում են սույն Կանոնակարգի նպատակներից, նախքան շուկայահանումը, սննդային հավելումները պետք է անցնեն թույլտվության այլ ընթացակարգով՝ այդ Կանոնակարգով նախատեսված թույլտվության ընթացակարգից բացի,

30) թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 53-րդ և 54-րդ հոդվածներով հաստատվում են Համայնքի ծագում ունեցող կամ երրորդ երկրից ներկրված կերի հետ կապված՝ արտակարգ միջոցների ձեռնարկման համար ընթացակարգերը: Դրանք թույլ են տալիս նման միջոցների ձեռնարկումն այնպիսի իրավիճակներում, որտեղ կերը հավանաբար լուրջ վտանգ է սպառնում մարդկանց, կենդանիների առողջությանը կամ միջավայրին, և որտեղ տվյալ անդամ պետության (պետությունների) կողմից ձեռնարկված միջոցները բավարար չափով չեն կարող վերացնել նման վտանգը,

31) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի՝ Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար ընթացակարգ սահմանող՝ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, (9)

32) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների նկատմամբ, եւ ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք եւ տարհամոզիչ,

33) 70/524/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի: Սակայն, հավելումներ ներմուծող համակցված կերային նյութերի միասնությունների նկատմամբ կիրառվող պիտակավորման դրույթները պետք է պահպանվեն մինչեւ Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի «Համակցված կերային նյութերի շուկայահանման մասին» 79/373/ԵՏՀ հրահանգի վերանայման (10) ավարտը,

34) հայտի դույնն ներկայացնելու համար անդամ պետություններին հասցեագրված ուղեցույցները պահպանվում են Խորհրդի 1987 թվականի փետրվարի 16-ի «Կենդանիների սննդի մեջ հավելումների գնահատման համար ուղեցույցները սահմանելու մասին» 87/153/ԵՏՀ հրահանգում (11): Դույնների համապատասխանության ստուգումը վերապահվում է Աննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմնին: Հետեւաբար, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել 87/153/ԵՏՀ հրահանգը: Սակայն, հավելվածը պետք է պահպանի իր գործողությունը մինչեւ կիրարկման կանոնների ընդունումը,

35) սննդային հավելումների օգտագործման խափանումից խուսափելու համար անհրաժեշտ է անցումային շրջան: Հետեւաբար, մինչեւ սույն Կանոնակարգի կանոնների կիրառելի լինելը, պետք է թույլ տալ արդեն թույլատրելի նյութերին մնալ շուկայում եւ օգտագործվել առկա օրենսդրության պայմաններով.

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգի նպատակը Համայնքի սննդային հավելումների շուկայահանման եւ օգտագործման թույլտվության համար ընթացակարգը հաստատելն է, ինչպես նաեւ սննդային հավելումների եւ պրեմիքսների վերահսկման ու պիտակավորման համար կանոններ սահմանելը՝ մարդկանց, կենդանիների առողջության եւ բարեկեցության, միջավայրի, ինչպես նաեւ օգտագործողների ու սպառողների՝ սննդային հավելումների հետ կապված շահերի պաշտպանության բարձր մակարդակն ապահովելու համար՝ ապահովելով ներքին շուկայի արդյունավետ գործունեությունը:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում՝

ա) մշակման լրացուցիչ միջոցների նկատմամբ.

բ) 2001/82/ԵՀ հրահանգում սահմանված՝ անասնաբուժական դեղագործական արտադրանքի նկատմամբ (12)՝ բացառությամբ որպես սննդային հավելումներ օգտագործվող կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատների:

Հոդված 2

Սահմանումները

1. Սույն Կանոնակարգի նպատակով կիրառվում են թիվ 178/2002 կանոնակարգում (ԵՀ) սահմանված՝ «կեր», «կերային նյութեր», «անասնակերի ոլորտի ձեռնարկատիրություն», «անասնակերի ոլորտի տնտեսավարող» եւ «հետազօծելիություն» բառերի սահմանումները:

2. Կիրառվում են նաեւ հետեւյալ սահմանումները՝

ա) «սննդային հավելումներ» նշանակում է բացառությամբ կերային նյութի եւ պրեմիքսների՝ նյութեր, միկրոօրգանիզմներ կամ պատրաստուկներ, որոնք միտումնավոր հավելվում են կերին կամ ջրին՝ 5-րդ հոդվածի երրորդ մասում նշված գործառույթներից, մասնավորապես՝ մեկ կամ ավելի գործառույթ կատարելու համար.

բ) «կերային նյութեր» նշանակում է Խորհրդի 1996 թվականի ապրիլի 29-ի «Կերային նյութերի շրջանառության մասին» 96/25/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի (ա) մասում սահմանված ապրանքները (13).

- գ) «համակցված կերային նյութեր» նշանակում է 79/373/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածի (բ) մասում սահմանված ապրանքները.
- դ) «լրացուցիչ կերային նյութեր» նշանակում է 79/373/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածի (ե) մասում սահմանված ապրանքները,
- ե) «պրեմիքսներ» նշանակում է սննդային հավելումների խառնուրդներ կամ որպես կրիչներ օգտագործվող կերային նյութերով կամ ջրով մեկ կամ ավելի սննդային հավելումների խառնուրդներ, որոնք նախատեսված չեն կենդանիներին անմիջականորեն սնելու համար,
- զ) «օրական կերաբաժին» նշանակում է անասնակերի 12% խոնավության պարունակության հիման վրա հաշվարկված՝ միջին հաշվով ընդհանուր քանակը, որն անհրաժեշտ է տվյալ տեսակի, տարիքային կատեգորիայի եւ արտադրանք տվող կենդանուն ամեն օր՝ իր բոլոր կարիքները բավարարելու համար,
- է) «լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կերային նյութեր» նշանակում է Խորհրդի 1999 թվականի ապրիլի 22-ի «Կենդանական ծագում ունեցող կերի մեջ անցանկալի նյութերի եւ ապրանքների մասին» 1999/29/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի (զ) կետում սահմանված ապրանքները (14),
- ը) «մշակման լրացուցիչ միջոցներ» նշանակում է ինքնին որպես կերային նյութեր չսպառվող, մշակման կամ վերամշակման ընթացքում տեխնոլոգիական նպատակ իրականացնելու համար անասնակերերի կամ կերային նյութերի մշակման մեջ միտումնավոր օգտագործվող որեւէ նյութ, որի արդյունքում կարող է վերջնական արտադրանքում լինել նյութի կամ դրա ածանցյալների մնացորդների ոչ միտումնավոր, բայց տեխնիկապես անխուսափելի ներկայությունը, այնպես, որ այս մնացորդները հակառակ ազդեցություն չունենան կենդանիների, մարդկանց առողջության եւ միջավայրի վրա, ինչպես նաեւ չունենան որեւէ տեխնոլոգիական ազդեցություն պատրաստի կերի վրա,
- թ) «հակամիկրոբիալներ» նշանակում է սինթետիկ կամ բնական ճանապարհով արտադրված նյութեր, որոնք օգտագործվում են սպանելու միկրոօրգանիզմներին, այդ թվում՝ մանրէներին, վիրուսներին կամ սնկերին, կամ պարագիտներին, մասնավորապես՝ նախակենդանիներին, կամ խափանելու դրանց աճը,
- ժ) «հակաբիոտիկ» նշանակում է միկրոօրգանիզմի կողմից արտադրված կամ դրանից ածանցված հակամիկրոբիալներ, որոնք քայքայում կամ խոչընդոտում են այլ միկրոօրգանիզմների աճը,

- ժա) «կոկցիդիոստատներ» եւ «հիստոմոնոստատներ» նշանակում են նախակենդանիներին սպանելու կամ դրանց խոչընդոտելու համար նախատեսված նյութեր,
- ժբ) «մնացորդի առավելագույն սահմանաչափ» նշանակում է կենդանական ծագում ունեցող կերի մեջ հավելման օգտագործման արդյունքում ստացված մնացորդի առավելագույն խտությունը, որը կարող է ընդունվել Համայնքի կողմից՝ օրինական թույլտվություն ստանալու կամ սննդի մեջ ընդունելի ճանաչվելու նպատակով,
- ժգ) «միկրոօրգանիզմ» նշանակում է գաղութ ձեւավորող միկրոօրգանիզմներ,
- ժդ) «առաջին շուկայահանում» նշանակում է արտադրությունից հետո հավելման սկզբնական շուկայահանումը, հավելման ներմուծումը կամ, եթե հավելումը ներառվել է կերի մեջ առանց շուկայահանման, ապա այդ կերի առաջին շուկայահանումը:
3. Եթե անհրաժեշտ է, կարող է որոշվել, ըստ 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի, թե արդյոք նյութը, միկրոօրգանիզմը կամ պատրաստուկը սննդային հավելում է սույն Կանոնակարգի գործողության ոլորտում:

ԳԼՈՒԽ II

ՄՆԱԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ԴԻՏԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 3

Շուկայահանումը, մշակումը եւ օգտագործումը

1. Որեւէ անձ չի շուկայահանում, մշակում կամ օգտագործում սննդային հավելումը, եթե՝

- ա) այն չի կարգավորվում սույն Կանոնակարգի համաձայն տրված թույլտվությամբ.
- բ) չեն բավարարվում սույն Կանոնակարգի մեջ օգտագործման համար սահմանված պայմանները՝ ներառյալ IV հավելվածում սահմանված ընդհանուր պայմանները, եթե թույլտվության մեջ այլ բան նախատեսված չէ, ինչպես նաեւ նյութի թույլտվության մեջ պայմանները, եւ
- գ) չեն բավարարվում սույն Կանոնակարգում պիտակավորման համար սահմանված պայմանները:

2. Գիտական նպատակներով փորձարկումների համար անդամ պետությունները կարող են թույլատրել նյութերի՝ որպես հավելումների օգտագործումը, որոնք թույլատրված չեն Համայնքի մակարդակում՝ բացառությամբ հակաբիոտիկների, այնպես, որ փորձարկումները կատարվեն 87/153/ԵՏՀ հրահանգում, 83/228/ԵՏՀ հրահանգում սահմանված սկզբունքների եւ պայմանների (15), կամ սույն Կանոնակարգի 7-րդ հոդվածի չորրորդ մասում սահմանված ուղեցույցների համաձայն եւ այնպես, որ լինի համապատասխան պաշտոնական վերահսկում: Համապատասխան կենդանիները կարող են օգտագործվել սննդի արտադրության համար, եթե միայն իշխանությունները հաստատում են, որ այն բացասական ազդեցություն չի ունենա կենդանիների եւ մարդկանց առողջության կամ միջավայրի վրա:

3. 6-րդ հոդվածի առաջին մասի (դ) եւ (ե) կետերում կատեգորիաների հավելումների, ինչպես նաեւ Համայնքի՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմներից (ԳՓՕ-ներ) բաղկացած, դրանց պարունակությամբ կամ դրանցից արտադրված ապրանքների շուկայահանմանը վերաբերող օրենսդրության շրջանակներում կարգավորվող հավելումների դեպքում 9-րդ հոդվածում նշված թույլտվության վերաբերյալ կանոնակարգում թույլտվության իրավատիրոջից, նրա իրավահաջորդից կամ իրավահաջորդներից, կամ նրա գրավոր թույլտվությամբ գործող անձից բացի՝ որեւէ մեկի կողմից ապրանքը չի շուկայահանվում:

4. Եթե այլ բան չի սահմանվում, թույլատրվում է վերջնական սպառողին անմիջականորեն վաճառվող հավելումները խառնելը՝ պահպանելով յուրաքանչյուր մեկ հավելման համար թույլտվության մեջ սահմանված պայմանների հետ համապատասխանությունը: Հետեւաբար, թույլատրելի հավելումների խառնումը չի ենթարկվում հատուկ թույլտվությունների՝ բացի 95/69/ԵՀ հրահանգում սահմանված պահանջներից (16):

▼M3

5. Եթե անհրաժեշտ է, տեխնոլոգիաների առաջընթացի կամ գիտության մեջ զարգացումների արդյունքում Հանձնաժողովը կարող է հարմարեցնել IV հավելվածում սահմանված ընդհանուր պայմանները: Այն միջոցները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 22-րդ հոդվածի չորրորդ մասում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 4

Թույլտվությունը

1. Կերային հավելման կամ սննդային հավելումը նորից օգտագործելու համար թույլտվություն ցանկացող որեւէ անձ ներկայացնում է հայտ՝ 7-րդ հոդվածի համաձայն:
2. Թույլտվությունը չի տրվում, մերժվում, երկարացվում, փոփոխվում, կասեցվում կամ չեղյալ հայտարարվում՝ բացառությամբ սույն Կանոնակարգում սահմանված հիմքերի եւ ընթացակարգերի, կամ թիվ 178/2002 կանոնակարգի 53-րդ եւ 54-րդ հոդվածների համաձայն:
3. Թույլտվության համար դիմողը կամ նրա ներկայացուցիչը հաստատվում են Համայնքում:

Հոդված 5

Թույլտվության պայմանները

1. Ոչ մի սննդային հավելում չի թույլատրվում, եթե նման թույլտվության համար դիմողը, 7-րդ հոդվածում նշված կիրարկվող միջոցների համաձայն, համապատասխանաբար եւ բավարար չափով չի ցույց տվել, որ հավելման օգտագործումը թույլ տվող Կանոնակարգում սահմանված պայմանների համաձայն, օգտագործելու դեպքում սննդային հավելումը բավարարում է երկրորդ պարբերության պահանջները եւ ունի երրորդ պարբերության մեջ սահմանված հատկանիշներից առնվազն որեւէ մեկը:
2. Սննդային հավելումը՝
 - ա) չպետք է ունենա բացասական ազդեցություն կենդանիների, մարդկանց առողջության կամ միջավայրի վրա.
 - բ) չպետք է ներկայացված լինի այնպես, որ մոլորության մեջ գցի սպառողին.

զ) չպետք է անասնաբուժական արտադրանքի բնորոշ հատկանիշները վնասելով, վնաս հասցնի սպառողին կամ անասնաբուժական արտադրանքին բնորոշ հատկանիշների վերաբերյալ մոլորության մեջ գցի:

3. Մենդային հավելումը պետք է՝

ա) դրականորեն ազդի կերի հատկանիշների վրա.

բ) դրականորեն ազդի կենդանական ծագում ունեցող արտադրանքի հատկանիշների վրա.

գ) դրականորեն ազդի դեկորատիվ ձկների եւ թռչունների գույնի վրա.

դ) բավարարի կենդանիների սննդի կարիքները.

ե) դրականորեն ազդի կենդանիների արտադրության բնապահպանական հետեւանքների վրա.

զ) դրականորեն ազդի կենդանիների արտադրության, գործելու կամ բարեկեցության վրա, մասնավորապես՝ ազդելով ստամոքսաաղիքային համակարգի կամ կերային նյութերը մարսելու կարողության վրա, կամ

է) ունենա կոկցիդիոստատիկ կամ հիստոմոնոստատիկ ազդեցություն:

4. Հակաբիոտիկները՝ բացառությամբ կոկցիդիոստատների կամ հիստոմոնոստատների, չեն թույլատրվում որպես սննդային հավելումներ:

Հոդված 6

Մենդային հավելումների կատեգորիաները

1. Մենդային հավելումը տեղավորվում է հետեւյալ մեկ կամ ավելի կատեգորիաներում, կախված դրա գործառույթներից եւ հատկություններից՝ 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածներում սահմանված ընթացակարգի համաձայն.

ա) տեխնոլոգիական հավելումներ՝ տեխնոլոգիական նպատակով կերին հավելված որեւէ նյութ.

բ) համահոտային հավելումներ՝ որեւէ նյութ, որի կերակրման համար հավելումը բարելավում կամ փոխում է կերի օրգանալեպտիկ հատկությունները, կամ կենդանիներից ստացված սննդի տեսողական հատկանիշները.

գ) սննդային հավելումներ.

դ) զոռոտեխնիկական հավելումներ՝ առողջ կենդանիների կենսագործունեության վրա դրականորեն ազդելու կամ միջավայրի վրա դրականորեն ազդելու համար օգտագործվող որեւէ հավելում:

ե) կոկցիդիոստատներ եւ հիստոմոնոստատներ:

2. Առաջին պարբերությունում նշված կատեգորիաներում սննդային հավելումներն այլեւս տեղավորվում են I հավելվածում նշված ֆունկցիոնալ խմբերից մեկում կամ մեկից ավելի խմբերում, ըստ իրենց հիմնական գործառույթի կամ գործառույթների՝ համաձայն 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված ընթացակարգի:

▼M3

3. Եթե անհրաժեշտ է, տեխնոլոգիաների առաջընթացի կամ գիտության մեջ զարգացումների արդյունքում Հանձնաժողովը հաստատում է լրացուցիչ սննդային հավելումների կատեգորիաներ եւ ֆունկցիոնալ խմբեր: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցներն ընդունվում են 22-րդ հոդվածի երրորդ մասում նշված՝ պատշաճ կերպով իրականացվող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 7

Թույլտվություն ստանալու համար դիմումը

1. 4-րդ հոդվածով նախատեսված թույլտվություն ստանալու համար դիմումն ուղարկվում է Հանձնաժողով: Հանձնաժողովն անդամ պետություններին անհապաղ տեղեկացնում է եւ դիմումը փոխանցում է Սննդամթերքի անվտանգության գծով եվրոպական մարմնին (այսուհետ նշվում է որպես Մարմին):

2. Մարմինը՝

ա) հաստատում է դիմումի՝ ներառյալ 3-րդ պարբերության մեջ նշված մանրամասների եւ փաստաթղթերի ստացումը, դիմողին գրավոր ուղարկում է ստացումից հետո 15 օրվա ընթացքում՝ սկսած ստացման ամսաթվից:

բ) անդամ պետությունների եւ Հանձնաժողովի համար հասանելի է դարձնում դիմողի կողմից տրված որեւէ տեղեկատվություն.

գ) հասարակությանը հասանելի է դարձնում երրորդ պարբերության (ը) մասում նշված դույզի ամփոփագիրը՝ պահպանելով 18-րդ հոդվածի երկրորդ մասում սահմանված գաղտնիության պահանջները:

3. Դիմելու պահին դիմողը Մարմին է ուղարկում հետեւյալ մանրամասները եւ փաստաթղթերը.

ա) իր անունը եւ հասցեն.

բ) սննդային հավելման նույնականացումը, դրա՝ 6-րդ հոդվածով, ըստ կատեգորիայի եւ ֆունկցիոնալ խմբի դասակարգումը, ինչպես նաեւ դրա մասնագրերը, այդ թվում՝ եթե կիրառելի է, մաքրության չափանիշները.

գ) սննդային հավելման արտադրության, պատրաստման եւ նպատակային օգտագործման նկարագիրը, ըստ նպատակային օգտագործման կերի մեջ հավելման վերլուծության մեթոդը եւ, ըստ անհրաժեշտության, սննդի մեջ սննդային հավելման կամ դրա փոխարկույթների մնացորդների մակարդակը որոշելու համար վերլուծության մեթոդը.

դ) իրականացված ուսումնասիրությունների պատճենները, ինչպես նաեւ որեւէ այլ մատչելի նյութ՝ ցույց տալու համար, որ սննդային հավելումը համապատասխանում է 5-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերում սահմանված չափորոշիչներին.

ե) սննդային հավելման շուկայահանման համար առաջարկվող պայմանները՝ ներառյալ պիտակավորման պահանջները եւ, ըստ անհրաժեշտության, օգտագործման եւ մշակման համար հստակ պայմանները (ներառյալ հայտնի անհամատեղելիությունները), լրացուցիչ անասնակերի, ինչպես նաեւ կենդանիների տեսակների եւ կատեգորիաների մեջ օգտագործման մակարդակները, որոնց համար նախատեսված է սննդային հավելումը.

զ) գրավոր հայտարարություն, որով դիմողը 21-րդ հոդվածում նշված Համայնքի մեթոդաբանական լաբորատորիա է ուղարկել սննդային հավելման երեք նմուշ՝ համաձայն II հավելվածում սահմանված պահանջների.

է) շուկայահանումից հետո դիտանցման առաջարկ այն հավելումների համար, որոնք, (բ) կետով առաջարկի համաձայն, չեն պատկանում 6-րդ հոդվածի առաջին մասում նշված (ա) կամ (բ) կատեգորիաներին, ինչպես նաեւ այն հավելումների համար, որոնք կարգավորվում են

Համայնքի՝ ԳՓՕ-ներից բաղկացած, դրանց պարունակությամբ կամ դրանցից արտադրված ապրանքների շուկայահանման մասին օրենսդրության գործողության շրջանակում:

ը) (ա)-ից (է) կետերով նախատեսված տեղեկատվությունը պարունակող ամփոփագիր.

թ) կիրառելի օրենսդրության համաձայն տրված որեւէ թույլտվության մանրամասներ այն հավելումների համար, որոնք կարգավորվում են Համայնքի՝ ԳՓՕ-ներից բաղկացած, դրանց պարունակությամբ կամ դրանցից արտադրված ապրանքների շուկայահանման մասին օրենսդրության գործողության շրջանակում:

4. Հանձնաժողովը, առաջինը խորհրդակցելով Մարմնի հետ, սահմանում է, 22-րդ հոդվածի երկրորդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, սույն հոդվածի կիրառման համար անհրաժեշտ կանոնները՝ ներառյալ դիմումը պատրաստելուն եւ ներկայացնելուն վերաբերող կանոններ:

Կիրառումը պետք է համապատասխանեցվի 87/153/ԵՏՀ հրահանգի հավելվածի հետ՝ մինչեւ կիրարկման կանոնների ընդունումը:

5. Մարմնի հետ խորհրդակցելուց հետո հաստատվում են հավելումների թույլտվության համար հատուկ ուղեցույցներ, եթե անհրաժեշտ է, 22-րդ հոդվածի երկրորդ մասում սահմանված ընթացակարգի համաձայն, 6-րդ հոդվածի առաջին մասում նշված հավելման յուրաքանչյուր կատեգորիայի համար: Այս ուղեցույցներում հաշվի է առնվում մեծից փոքր տեսակների վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքների վրա հիմնվելու հնարավորությունը:

▼M3

Մարմնի հետ խորհրդակցելուց հետո կարող են սույն Հոդվածի կիրարկման համար լրացուցիչ կանոններ հաստատվել:

Հանձնաժողովը սահմանում է սննդի մեջ օգտագործելու համար թույլատրելի հավելումների թույլտվության պարզեցված դրույթները թույլ տալու կանոնները: Մասնավորապես, լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 22(3) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Մյուս միջոցները կարող են ընդունվել 22(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Այդ կանոնները պետք է, ըստ անհրաժեշտության, տարբերակեն

մթերատու կենդանիների դեպքում սննդային հավելումների համար պահանջները՝ այլ կենդանիների, մասնավորապես՝ ընտանի կենդանիների դեպքում պահանջներից:

▼B

6. Մարմինը հրապարակում է մանրամասն ուղեցույց՝ հայտը պատրաստելու եւ ներկայացնելու հարցերում դիմողին օժանդակելու համար:

Հոդված 8

Մարմնի եզրակացությունը

1. Մարմինը եզրակացություն է տալիս վավերացված հայտն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Այս ժամկետը երկարացվում է, երբ Մարմինը դիմողից խնդրում է երկրորդ պարբերության համաձայն լրացուցիչ տեղեկություններ:

2. Մարմինը կարող է, ըստ անհրաժեշտության, դիմողին խնդրել ավելացնել դիմումին կից ներկայացված մանրամասները՝ դիմողի հետ Մարմնի խորհրդակցությունից հետո հստակեցված ժամկետում:

3. Իր եզրակացությունը պատրաստելու համար Մարմինը՝

ա) հաստատում է, որ դիմողի կողմից ներկայացված մանրամասները եւ փաստաթղթերը համապատասխանում են 7-րդ հոդվածին եւ իրականացնում է գնահատում՝ որոշելու, թե արդյոք սննդային հավելումը համապատասխանում է 5-րդ հոդվածում սահմանված պայմաններին.

բ) հաստատում է Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի զեկույցը:

4. Սննդային հավելման թույլտվության օգտին եզրակացության դեպքում եզրակացությունը նաեւ ներառում է հետեւյալ տարրերը.

ա) դիմողի անունը եւ հասցեն.

բ) սննդային հավելման նշանակումը՝ ներառյալ 6-րդ հոդվածով նախատեսված ֆունկցիոնալ խմբերում դասակարգումը եւ բաշխումը, նշանակման նկարագրությունը՝ ներառյալ, եթե կիրառելի է, մաքրության չափանիշները եւ վերլուծության մեթոդը.

- գ) կախված գնահատման արդյունքից, մշակման, շուկայահանումից հետո դիտանցման պահանջների եւ օգտագործման վերաբերյալ հատուկ պայմանները կամ սահմանափակումները՝ ներառյալ կենդանիների տեսակները եւ այն կենդանիների տեսակների կատեգորիաները, որոնց համար օգտագործվում է հավելումը.
- դ) (գ) կետով նախատեսված պայմանների եւ սահմանափակումների արդյունքում անհրաժեշտ դարձած սննդային հավելման պիտակավորման համար լրացուցիչ պահանջները.
- ե) կենդանական ծագում ունեցող համապատասխան սննդամթերքի համար Մնացորդների առավելագույն սահմանների (ՄԱՍեր) հաստատման առաջարկ, եթե Մարմինը չի հանգում այն եզրակացության, որ ՄԱՍ-երի հաստատումն անհրաժեշտ չէ սպառողների պաշտպանության համար, կամ եթե ՄԱՍ-երն արդեն հաստատվել են Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի Համայնքի՝ կենդանական ծագում ունեցող սննդամթերքի մեջ անասնաբուժական բժշկական ապրանքների մնացորդների առավելագույն սահմանների հաստատման ընթացակարգը սահմանող՝ թիվ 2377/90 կանոնակարգի (ԵՏՀ) I կամ III հավելվածներում: (17).

5. Մարմինն անհապաղ փոխանցում է իր եզրակացությունը Հանձնաժողովին, անդամ պետություններին եւ դիմողին, այդ թվում՝ այն ներկայացնում է սննդային հավելման գնահատման մասին իր զեկույցը եւ նշում, թե ինչու է հանգել այդ եզրակացությանը:

6. 18-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ որպես գաղտնի ճանաչված որեւէ տեղեկատվության վերացումից հետո Մարմինը հրապարակում է իր եզրակացությունը:

Հոդված 9

Համայնքի կողմից տրվող թույլտվությունը

1. Մարմնի եզրակացության ստացումից հետո երեք ամսվա ընթացքում Հանձնաժողովը պատրաստում է թույլտվությունը տալու կամ մերժելու համար կանոնակարգի նախագիծը: Այս նախագիծում հաշվի են առնվում 5-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերի պահանջները, Համայնքի օրենքը եւ խնդրի վերաբերյալ այլ իրավաչափ գործոններ, մասնավորապես՝ կենդանիների առողջության եւ բարեկեցության, ինչպես նաեւ կենդանական ծագում ունեցող ապրանքներից սպառողի օգուտները:

Եթե նախագիծը չի համընկնում Մարմնի եզրակացության հետ, ապա նախագիծում տարբերությունների պատճառների վերաբերյալ բացատրություն է տրվում:

Բացառապես բարդ դեպքերում երեք ամսվա վերջնաժամկետը կարող է երկարաձգվել:

2. Նախագիծն ընդունվում է 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն:

3. Սույն հոդվածի կիրարկման համար կանոնները եւ, մասնավորապես՝ թույլատրելի հավելումների նույնականացման համարի վերաբերյալ կանոնները կարող են հաստատվել 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն:

4. Հանձնաժողովը դիմողին անհապաղ տեղեկացնում է երկրորդ պարբերության համաձայն ընդունված կանոնակարգման մասին:

5. Թույլտվությունը տվող կանոնակարգը ներառում է 8-րդ հոդվածի չորրորդ մասի (բ), (գ), (դ) եւ (ե) կետերում նշված տարրերն ու նույնականացման համարը:

6. 6-րդ հոդվածի առաջին մասում նշված (դ) եւ (ե) կատեգորիաներին պատկանող հավելումների, ինչպես նաեւ ԳՓՕ-ներից բաղկացած, դրանց պարունակությամբ եւ դրանցից արտադրված հավելումների համար թույլտվություն տվող կանոնակարգը ներառում է թույլտվության իրավատիրոջ անունը եւ, ըստ անհրաժեշտության, ԳՓՕ-ներին վերապահված հատուկ նույնականացման նշանը, ինչպես նշված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի գենետիկորեն փոփոխված օրգանիզմների հետազոտությանը եւ պիտակավորմանը, ինչպես նաեւ գենետիկորեն փոփոխված օրգանիզմներից արտադրված սննդամթերքի եւ անասնակերերի հետազոտությանը վերաբերող՝ թիվ 1830/2003 կանոնակարգում (ԵՀ) եւ փոփոխվող 2001/18/ԵՀ հրահանգում: (18).

7. Եթե կենդանիներին կերակրած սննդի մեջ հավելման մնացորդի մակարդակները կարող են վնասակար ազդեցություն ունենալ մարդկանց առողջության վրա, ապա կանոնակարգում ներառվում են ակտիվ նյութի կամ կենդանական ծագում ունեցող համապատասխան սննդամթերքում փոխարկոյթների համար ՄԱՍ-երը: Այս դեպքում ակտիվ նյութը հաշվի է առնվում Խորհրդի 96/23/ԵՀ հրահանգի նպատակներով (19), ինչպես սահմանվում է այդ Հրահանգի I հավելվածում: Եթե տվյալ նյութի համար ՄԱՍ-ն արդեն հաստատվել է Համայնքի կանոններում, ապա այդ ՄԱՍ-ը նաեւ կիրառվում է ակտիվ նյութի մնացորդների կամ դրա՝ որպես սննդային հավելում օգտագործելուց առաջացող փոխարկոյթների նկատմամբ:

8. Սույն Կանոնակարգում սահմանված ընթացակարգի համաձայն տրված թույլտվությունը գործում է ամբողջ Համայնքում 10 տարի ժամկետով եւ երկարաձգվում է 14-րդ հոդվածի համաձայն: Թույլատրելի սննդային հավելումը մուտք է արվում 17-րդ հոդվածում նշված Գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան): Գրանցամատյանում յուրաքանչյուր գրանցման մեջ նշվում է թույլտվության ամսաթիվը եւ ներառվում են 5-րդ, 6-րդ եւ 7-րդ պարբերություններում նշված մանրամասները:

9. Թույլտվություն տալը չի հակասում համապատասխան սննդային հավելման մասով անասնակերի ոլորտի որեւէ գործողություն իրականացնողի ընդհանուր քաղաքացիական եւ քրեական պատասխանատվությանը:

Հոդված 10

Գոյություն ունեցող ապրանքների կարգավիճակը

1. Շեղում կատարելով 3-րդ հոդվածից՝ 70/524/ԵՏՀ հրահանգի համաձայն շուկայահանված սննդային հավելումը, ինչպես նաեւ 82/471/ԵՏՀ հրահանգի հավելվածի 2.1, 3-րդ եւ 4-րդ

կետերում նշված միզանյութը եւ դրա ածանցյալները, ամինաթթուն, ամինաթթվի աղը կամ միանման նյութը, կարող են շուկայահանվել եւ օգտագործվել 70/524/ԵՏՀ կամ 82/471/ԵՏՀ հրահանգներում նշված պայմանների եւ դրանց կիրարկող միջոցների համաձայն՝ ներառյալ, մասնավորապես՝ համակցված կերին եւ կերային նյութերին վերաբերող պիտակավորման հատուկ դրույթները, այնպես, որ բավարարվեն հետեւյալ պայմանները.

ա) սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում սննդային հավելումը շուկայահանող առաջին անձինք կամ որեւէ այլ շահագրգիռ կողմ Հանձնաժողովին ծանուցում է դրա մասին: Միեւնույն ժամանակ, 7-րդ հոդվածի երրորդ մասի (ա), (բ) եւ (գ) կետերում նշված մանրամասներն անմիջապես ուղարկվում են Մարմին.

բ) (ա) կետում նշված ծանուցումից հետո մեկ տարվա ընթացքում Մարմինը, այն բանից հետո, երբ հաստատում է, որ ներկայացվել են բոլոր պահանջվող տեղեկությունները, Հանձնաժողովին տեղեկացնում է, որ ստացել է սույն Հոդվածով պահանջվող տեղեկատվությունը: Համապատասխան ապրանքները գրանցվում են Գրանցամատյանում: Գրանցամատյանի յուրաքանչյուր գրանցման մեջ նշվում է այն ամսաթիվը, որին համապատասխան, ապրանքն առաջին անգամ գրանցվել է Գրանցամատյանում եւ, համապատասխան դեպքերում, գոյություն ունեցող թույլտվության լրանալու ժամկետը:

2. Հայտ է ներկայացվում 7-րդ հոդվածի համաձայն, թույլտվության սահմանափակ ժամկետ ունեցող հավելումների համար 70/524/ԵՏՀ հրահանգի համաձայն տրված թույլտվության լրանալու ժամկետից ամենաուշը մեկ տարի առաջ եւ, սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը յոթ տարվա ընթացքում այն հավելումների համար, որոնց տրվել է թույլտվություն, առանց ժամկետի, կամ 82/471/ԵՏՀ հրահանգի համաձայն: Վերագնահատվելիք հավելումների տարբեր դասերն առաջնահերթության կարգով թվարկող մանրամասն օրացույցը կարող է ընդունվել 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն: Ցանկը կազմելիս Մարմինը խորհրդակցության է հրավիրվում:

3. Գրանցամատյանում գրանցված ապրանքները ենթարկվում են սույն Կանոնակարգման դրույթներին, մասնավորապես՝ 8-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ եւ 16-րդ հոդվածներին, որոնք, չհակասելով առաջին պարբերության համաձայն յուրաքանչյուր նյութի պիտակավորմանը, շուկայահանմանը եւ օգտագործմանը վերաբերող հատուկ պայմաններին, կիրառվում են նման ապրանքների նկատմամբ, եթե դրանց տրվել է թույլտվություն՝ 9-րդ հոդվածի համաձայն:

4. Հատուկ իրավատիրոջը չտրված թույլտվությունների դեպքում որեւէ անձ կամ որեւէ այլ շահագրգիռ կողմ, որը ներկրում կամ արտադրում է սույն Հոդվածում նշված ապրանքները, կարող է Հանձնաժողովին ներկայացնել առաջին պարբերության մեջ նշված տեղեկությունները կամ երկրորդ պարբերության մեջ նշված հայտը:

5. Եթե առաջին պարբերության (ա) կետում նշված ծանուցումը եւ դրան կից մանրամասները չեն տրամադրվում նշված ժամկետում կամ հայտնաբերվում է, որ դրանք սխալ են, կամ եթե հայտը չի ներկայացվում, ինչպես պահանջվում է երկրորդ պարբերությունում եւ նշված ժամկետում, ապա ընդունվում է կանոնակարգ, 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն, պահանջելով, որ համապատասխան հավելումները հանվեն շուկայից: Նման միջոցը կարող է ապահովել սահմանափակ ժամանակահատված, որի ընթացքում կարող են սպառվել ապրանքի գոյություն ունեցող արժեթղթերը:

6. Եթե դիմողից անկախ պատճառներով որոշում չի ընդունվում թույլտվության լրանալու ժամկետից առաջ դրա երկարացման վերաբերյալ, ապա ապրանքի թույլտվության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է՝ մինչեւ Հանձնաժողովի որոշում կայացնելը: Հանձնաժողովը դիմողին տեղեկացնում է թույլտվության ժամկետի երկարաձգման մասին:

7. Շեղվելով 3-րդ հոդվածից՝ Համայնքում 26-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ամսաթվին որպես սիլոսային հավելումներ օգտագործվող նյութերը, միկրոօրգանիզմները եւ պատրաստուկները կարող են շուկայահանվել եւ օգտագործվել այնպես, որ համապատասխանեցվեն առաջին պարբերության (ա) եւ (բ) կետերն ու երկրորդ պարբերությունը: 3-րդ եւ 4-րդ պարբերությունները կիրառվում են համապատասխանաբար: Այս նյութերի դեպքում երկրորդ պարբերության մեջ նշված հայտի ներկայացման վերջնաժամկետը սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարին է:

Հոդված 11

Վերացումը

1. Մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը որպես կերային հավելումներ օգտագործվող կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատների վերացման վերաբերյալ որոշում կայացնելու համար Հանձնաժողովը մինչեւ 2008 թվականի հունվարի 1-ը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ կներկայացնի այս նյութերի՝ որպես սննդային հավելումներ եւ մատչելի այլընտրանքներ օգտագործելու վերաբերյալ զեկույց, որին կկցվի, ըստ անհրաժեշտության, օրենսդրական առաջարկությունները:

2. Շեղվելով 10-րդ հոդվածից եւ չհակասելով 13-րդ հոդվածին՝ հակաբիոտիկները, բացառությամբ կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատների, կարող են շուկայահանվել եւ օգտագործվել որպես սննդային հավելումներ միայն մինչեւ 2005 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ 2006 թվականի հունվարի 1-ից այդ նյութերը կհանվեն Գրանցամատյանից:

Հոդված 12

Հսկում

1. Այն բանից հետո, երբ հավելումը թույլատրվել է սույն Կանոնակարգի համաձայն, որեւէ անձ, ով օգտագործում կամ շուկայահանում է այդ նյութը, կամ կերային նյութը, որի մեջ ներառվել է, կամ որեւէ այլ շահագրգիռ կողմ ապահովում է, որ հարգվի շուկայահանման, հավելման կամ հավելում պարունակող կերային նյութերի վրա պարտադրված որեւէ պայման կամ սահմանափակում:

2. Եթե պարտադրվում են 8-րդ հոդվածի չորրորդ մասի (գ) կետում նշված դիտանցման պահանջները, ապա թույլտվության իրավատերն ապահովում է, որ դիտանցումն իրականացվի եւ Հանձնաժողովին ներկայացնում է զեկույցներ՝, թույլտվության համաձայն: Թույլտվության իրավատերը Հանձնաժողովին անհապաղ տեղեկացնում է որեւէ նոր տեղեկատվության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ սննդային հավելման օգտագործման անվտանգության գնահատման վրա, մասնավորապես՝ սպառողների հատուկ կատեգորիաների առողջության նկատմամբ զգայունությունների վրա: Թույլտվության իրավատերը Հանձնաժողովին անհապաղ տեղեկացնում է սննդային հավելումը շուկայահանող որեւէ երրորդ երկրի իրավասու իշխանության կողմից պարտադրված որեւէ արգելքի կամ սահմանափակման մասին:

Հոդված 13

Թույլտվությունների փոփոխությունը, կասեցումը եւ չեղյալ հայտարարումը

1. Մարմինը, սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետությունից կամ Հանձնաժողովից դիմում ստանալուց հետո, ներկայացնում է եզրակացություն այն մասին, թե արդյոք թույլտվությունը բավարարում է սույն Կանոնակարգով սահմանված պայմանները: Այն իր եզրակացությունն անմիջապես ներկայացնում է Հանձնաժողով, անդամ պետություններ եւ, հարկ եղած դեպքում, թույլտվության իրավատիրոջը: Եզրակացությունը հրապարակվում է:
2. Հանձնաժողովն անհապաղ քննում է Մարմնի եզրակացությունը: Որեւէ անհրաժեշտ միջոցառում ձեռնարկվում է թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 53-րդ եւ 54-րդ հոդվածների համաձայն: Թույլտվության փոփոխության, կասեցման կամ դրա չեղյալ հայտարարման վերաբերյալ որոշումը կայացվում է սույն Կանոնակարգի 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն:
3. Եթե թույլտվության իրավատերն առաջարկում է փոփոխել թույլտվության պայմանները՝ Հանձնաժողովին ներկայացնելով հայտ եւ դրան կից՝ փոփոխության պահանջի մասին համապատասխան տեղեկություններ, ապա Մարմինը Հանձնաժողովին եւ անդամ պետություններին է ներկայացնում առաջարկության վերաբերյալ իր եզրակացությունը: Հանձնաժողովն անհապաղ քննում է Մարմնի եզրակացությունը եւ, 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն, որոշում է կայացնում:
4. Հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է դիմողին ընդունված որոշման մասին: Գրանցամատյանը փոփոխվում է ըստ անհրաժեշտության:
5. 7-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերը, ինչպես նաեւ 8-րդ եւ 9-րդ հոդվածները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 14

Թույլտվությունների գործողության ժամկետի երկարաձգումը

1. Սույն Կանոնակարգով թույլտվությունները երկարաձգվում են 10 տարվա ժամկետով: Երկարաձգման համար դիմումն ուղարկվում է Հանձնաժողով՝ թույլտվության լրանալու ժամկետից ամենաուշը մեկ տարի առաջ:

Հատուկ իրավատիրոջը չտրված թույլտվությունների դեպքում որեւէ անձ, ով առաջինն է շուկայահանում հավելումը կամ որեւէ այլ շահագրգիռ կողմ կարող է Հանձնաժողովին հայտ ներկայացնել եւ համարվել որպես դիմող:

Հատուկ իրավատիրոջը չտրված թույլտվությունների դեպքում թույլտվության իրավատերը կամ նրա իրավահաջորդը կամ իրավահաջորդները կարող են Հանձնաժողովին հայտ ներկայացնել եւ համարվել որպես դիմող:

2. Դիմելու պահին դիմողը Մարմին է ուղարկում հետեյալ մանրամասները եւ փաստաթղթերը.

- ա) սննդային հավելումը շուկայահանելու համար թույլտվության պատճենը.
- բ) շուկայահանումից հետո դիտանցման արդյունքների վերաբերյալ զեկույց, եթե նման դիտանցման համար պահանջները ներառված են թույլտվության մեջ.
- գ) սննդային հավելման օգտագործման անվտանգության գնահատման վերաբերյալ որեւէ այլ նոր տեղեկատվություն, որը դարձել է հասանելի, ինչպես նաեւ կերային հավելման՝ կենդանիների, մարդկանց կամ միջավայրի համար վտանգները.
- դ) հարկ եղած դեպքում, սկզբնական թույլտվության պայմանները փոփոխելու կամ լրացնելու առաջարկ, այդ թվում՝ հետագա դիտանցմանը վերաբերող պայմանները:

3. 7-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերը, ինչպես նաեւ 8-րդ եւ 9-րդ հոդվածները կիրառվում են համապատասխանաբար:

4. Եթե դիմողից անկախ պատճառներով չի ընդունվում թույլտվության լրանալու ժամկետից առաջ դրա երկարաձգման վերաբերյալ որոշում, ապա ապրանքի թույլտվության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է մինչեւ Հանձնաժողովի որոշում կայացնելը: Թույլտվության ժամկետի երկարաձգման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է 17-րդ հոդվածում նշված Գրանցամատյանում:

Հոդված 15

Հրատապ թույլտվություն

Այն հատուկ դեպքերում, երբ կենդանիների բարեկեցության պաշտպանության համար անհրաժեշտ է հրատապ թույլտվություն, Հանձնաժողովը կարող է, 22-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն, ժամանակավորապես թույլատրել հավելման օգտագործումը առավելագույնը հինգ տարվա ժամկետով:

ԳԼՈՒԽ III

ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 16

Սննդային հավելումների եւ պրեմիքսների պիտակավորումն ու փաթեթավորումը

1. Ոչ մեկը չի շուկայահանում սննդային հավելումը կամ հավելումների պրեմիքսը, եթե դրա փաթեթավորումը կամ կոնտեյները պիտակավորված չէ Համայնքում հաստատված արտադրողի, փաթեթավորողի, ներկրողի, վաճառողի կամ դիստրիբյուտորի պատասխանատվությամբ եւ պարունակում է հետեյալ տեղեկատվությունը՝ արտահայտված, պարզ ընթեռնելի եւ ջնջմանը չենթարկվող կերպով, անդամ պետության

առնվազն ազգային լեզվով կամ լեզուներով, նյութի մեջ պարունակված յուրաքանչյուր հավելման հետ կապված.

- ա) թույլտվության տալու պահին հավելումներին տրվող հատուկ անունները, որին նախորդում է ֆունկցիոնալ խմբի անունը, ինչպես նշվում է թույլտվության մեջ.
- բ) սույն Հոդվածում նշված մանրամասների համար պատասխանատու անձի անունը կամ բիզնեսում գրանցված անունը, ինչպես նաև հասցեն կամ բիզնեսի գրանցված վայրը.
- գ) զտաքաշը կամ, լուծույթային հավելումների եւ պրեմիքսների դեպքում, կամ զուտ ծավալը կամ զտաքաշը.

▼M4

- դ) եթե անհրաժեշտ է, սննդային հավելումը կամ պրեմիքսն արտադրող կամ շուկայահանող ձեռնարկության հաստատման համարը՝ համաձայն կերի հիգիենայի համար պահանջները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի հունվարի 12-ի թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) (28) կամ, համապատասխան դեպքերում, համաձայն թիվ 95/69/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածի.

▼B

- ե) օգտագործման ուղեցույցները, ինչպես նաև օգտագործման համար անվտանգության վերաբերյալ առաջարկությունները եւ, համապատասխան դեպքերում, թույլտվության մեջ նշված հատուկ պահանջները, ներառյալ այն կենդանիների տեսակները եւ կատեգորիաները, որոնց համար նախատեսվում է հավելումը կամ հավելումների պրեմիքսը.

զ) նույնականացնող համարը,

է) խմբաքանակի նույնականացման համարը եւ արտադրության ամսաթիվը:

▼M4

«Պրեմիքսների դեպքում (բ), (դ), (ե) եւ (է) կետերը չեն վերաբերում ներառված սննդային հավելումներին:»

▼B

2. Համային միացությունների դեպքում հավելումների ցանկը կարող է փոխարինվել «համային միացությունների խառնուրդ» բառերով: Սա չի վերաբերում կերի եւ խմելու ջրի մեջ օգտագործման ժամանակ քանակական սահմանափակման ենթարկվող համային միացություններին:

▼M4

3. Ի լրացում 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվության, III հավելվածում նշված ֆունկցիոնալ խմբին պատկանող սննդային հավելման կամ III հավելվածում նշված ֆունկցիոնալ խմբին պատկանող հավելում պարունակող պրեմիքսի փաթեթավորումը կամ կոնտեյները պետք է կրի այդ հավելվածում նշված տեղեկատվություն՝ արտահայտված, պարզ ընթերցելի եւ ջնջմանը չենթարկվող կերպով:

4. Պրեմիքսների դեպքում պիտակի վրա պետք է նշված լինի «պրեմիքս» բառը: Կերային նյութերի դեպքում կրիչները նշվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 «Կերի շուկայահանման եւ օգտագործման մասին» կանոնակարգի (ԵՀ) 17(1)(ե) հոդվածի համաձայն (21) եւ այն դեպքում, երբ որպես կրիչ օգտագործվում է ջուրը, պետք է նշվի խոնավության պարունակությունը պրեմիքսում: Որպես

ամբողջություն՝ մեկ պրեմիքսի համար կարող է նշվել պահպանման միայն մեկ նվազագույն ժամկետ, այդպիսի նվազագույն պահպանման ժամկետը որոշվում է դրա յուրաքանչյուր բաղադրիչի նվազագույն պահպանման ժամկետի հիման վրա:

▼B

5. Հավելումները եւ պրեմիքսները շուկայահանվում են միայն փակ փաթեթներում կամ կոնտեյներներում, որոնք պետք է փակված լինեն այնպես, որ բացելու ժամանակ վնասվի ամրացնող սարքը եւ այլեւս հնարավոր չլինի օգտագործել:

▼M3

6. Հանձնաժողովը տեխնոլոգիաների առաջընթացը եւ գիտության մեջ զարգացումները հաշվի առնելու համար կարող է III հավելվածում փոփոխություններ ընդունել: Այն միջոցները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 22-րդ հոդվածի չորրորդ մասում նշված, մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

▼B

ԳԼՈՒԽ IV

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17

Համայնքի՝ սննդային հավելումների գրանցամատյանը

1. Հանձնաժողովը հաստատում եւ թարմացնում է Համայնքի սննդային հավելումների գրանցամատյանը:
2. Գրանցամատյանը պետք է մատչելի լինի հանրության համար:

Հոդված 18

Գաղտնիությունը

1. Դիմողը կարող է նշել, թե սույն Կանոնակարգով ներկայացված որ տեղեկատվությունն է ցանկանում, որ գաղտնի լինի, հիմնվելով այն բանի վրա, որ այդ տեղեկատվության բացահայտումը կարող է զգալիորեն վնասել իր մրցունակությունը: Նման դեպքերում պետք է հիմնավորում տրվի, որը հնարավոր է ստուգել:
 2. Հանձնաժողովը, դիմողի հետ խորհրդակցելուց հետո, որոշում է, թե երրորդ պարբերությունում նշված տեղեկատվությունից բացի որ տեղեկատվությունը պետք է պահպանվի գաղտնի եւ դիմողին տեղեկացնում է իր որոշման մասին:
 3. Հետեյալ տեղեկատվությունը չի համարվում գաղտնի.
- ա) սննդային հավելման անունն ու բաղադրությունը եւ, ըստ անհրաժեշտության, շտամարտադրիչների նշումը.

- բ) սննդային հավելման ֆիզիկաքիմիական եւ կենսաբանական առանձնահատկությունները.
- գ) մարդկանց, կենդանիների առողջության եւ միջավայրի վրա կերային հավելման ազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների մասին եզրակացությունները.
- դ) կենդանական ապրանքների առանձնահատկությունների եւ դրանց սննդային հատկությունների վրա սննդային հավելումների ազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների մասին եզրակացությունները.
- ե) սննդային հավելման հայտնաբերման ու բացահայտման մեթոդները եւ, եթե հնարավոր է, դիտանցման պահանջները եւ դիտանցման արդյունքների վերաբերյալ ամփոփագիրը.

4. Անկախ երկրորդ պարբերությունից՝ Մարմինը, ըստ պահանջի, Հանձնաժողովին եւ անդամ պետություններին ապահովում է իր տրամադրության տակ եղած բոլոր տեղեկություններով, այդ թվում՝ երկրորդ պարբերության համաձայն որպես գաղտնի ճանաչված որեւէ տեղեկատվություն:

5. Մարմինը, իր կողմից պահված փաստաթղթերի հասանելիության համար դիմումներն ստանալիս կիրառում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի մայիսի 30-ի Եվրոպական պառլամենտի, Խորհրդի եւ Հանձնաժողովի փաստաթղթերի (22) հասանելիության վերաբերյալ թիվ 1049/2001 կանոնակարգի (ԵՀ) սկզբունքները:

6. Անդամ պետությունները, Հանձնաժողովը եւ Մարմինը գաղտնի են պահում երկրորդ պարբերությամբ որպես գաղտնի ճանաչված բոլոր տեղեկությունները, բացառությամբ այն դեպքի, երբ անհրաժեշտ է, որ նման տեղեկությունները հրապարակվեն՝ մարդկանց, կենդանիների առողջության կամ միջավայրի պաշտպանության համար: Անդամ պետությունները սույն Կանոնակարգով ստացված փաստաթղթերին հասանելիության համար դիմումներին ընթացք են տալիս, թիվ 1049/2001 կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածի համաձայն:

7. Եթե դիմողը հետ է վերցնում կամ հետ է վերցրել դիմումը, ապա անդամ պետությունները, Հանձնաժողովը եւ Մարմինը հաշվի են առնում առետրի եւ արդյունաբերության վերաբերյալ տեղեկատվությունը՝ ներառյալ հետազոտությունների եւ զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաեւ այն տեղեկատվությունը, որի հիման վրա Հանձնաժողովը եւ դիմողը չեն համաձայնվում դրա գաղտնիության հարցում:

Հոդված 19

Վարչական վերանայում

Հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ կամ որեւէ անդամ պետության կամ անմիջական եւ ուղղակի առնչություն ունեցող որեւէ անձի պահանջով վերանայել սույն Կանոնակարգի համաձայն ընդունված ցանկացած որոշում կամ գնահատել սույն Կանոնակարգով մարմնին վերապահված իրավասությունների չիրականացումը:

Այդ նպատակով Հանձնաժողովը դիմում է ներկայացվում երկու ամսվա ընթացքում այն օրվանից հետո, երբ տվյալ կողմը տեղեկացել է համապատասխան գործողության կամ անգործության մասին:

Հանձնաժողովը որոշում է ընդունում երկու ամսվա ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով մարմնից չեղյալ ճանաչել իր կողմից ընդունված որոշումը կամ շտկել սահմանված ժամանակահատվածում գործելու իր ծախսերը:

Հոդված 20

Տվյալների պաշտպանությունը

1. 7-րդ հոդվածով պահանջվող հայտի մեջ ներկայացված գիտական տվյալները եւ մյուս տեղեկությունները չեն կարող օգտագործվել հաջորդ հայտատուի օգտին թույլտվությունն ստանալուց հետո տասը տարվա ընթացքում, քանի դեռ հաջորդ հայտատուն չի համաձայնեցրել նախկին հայտատուի հետ նշված տվյալներն ու տեղեկություններն օգտագործելու փաստը:
2. Տվյալների պաշտպանության տասնամյա ժամանակահատվածը երկարաձգվում է մեկ տարով յուրաքանչյուր փոքր տեսակի համար, որի համար տրված է կիրառումը երկարաձգելու թույլտվություն՝ խթանելու համար այն ջանքերը, որոնք ուղղված են հավելումների համար փոքր տեսակների դեպքում թույլտվություններ ձեռք բերելուն՝ կիրառելի այլ տեսակների մասով:
3. Հայտատուն եւ նախկին հայտատուն ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ տեղեկությունների փոխանակման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու համար, որպեսզի չկրկնեն թունաբանական հետազոտությունները ողնաշարավորների վրա: Եթե, այնուամենայնիվ, տեղեկությունները փոխանակելու վերաբերյալ նման համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել հրապարակել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է՝ ողնաշարավորների վրա թունաբանական հետազոտություններից խուսափելու համար՝ միաժամանակ ապահովելով ողջամիտ հավասարակշռություն գործող կողմերի շահերի միջեւ:
4. Տասնամյա ժամանակահատվածն ավարտվելուն պես գիտական տվյալների եւ հայտի դոսյեում պարունակվող տեղեկատվության հիման վրա իրականացված ամբողջ գնահատման կամ դրա մի մասի արդյունքները կարող են օգտագործվել մարմնի կողմից՝ հոգուտ մեկ այլ հայտատուի:

Հոդված 21

Էտալոնային լաբորատորիաները

Համայնքի մեթոդաբանական լաբորատորիան եւ դրա աշխատանքներն ու պարտականությունները սահմանվում են II հավելվածում:

Հավելումների մասով թույլտվություն ձեռք բերելու նպատակով հայտատուներն իրենց լուման են ներդնում Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը հոգալու եւ II հավելվածում նշված Ազգային էտալոնային լաբորատորիաների կոնսորցիումին նպաստելու գործում:

▼M3

II հավելվածի կիրարկման համար մանրամասն կանոններն ընդունվում են 22(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

II հավելվածը կարող է փոփոխվել Հանձնաժողովի կողմից: Այն միջոցները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 22-րդ հոդվածի երրորդ մասում նշված, մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

▼B

Հոդված 22

Կոմիտեի կողմից կիրարկվող ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:

▼M3

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5(ա)(1)–(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 23

Ուժը կորցրած ճանաչելը

1. Սույն Կանոնակարգի կիրարկման ամսաթվից սկսած՝ 70/524/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում: Այնուամենայնիվ, 70/524/ԵՏՀ հրահանգի 16-րդ հոդվածն ուժի մեջ է մինչեւ 79/373/ԵՏՀ հրահանգի վերանայումը՝ ներառելու կանոններ կերի՝ հավելումներով ներկայացված պիտակավորման վերաբերյալ:

2. 82/471/ԵՏՀ հրահանգի հավելվածի 2.1, 3 եւ 4 կետերի գործողությունը դադարեցվում է՝ սկսած սույն կանոնակարգի կիրարկման ամսաթվից:

3. Սույն կանոնակարգի կիրարկման ամսաթվից սկսած՝ 87/153/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում: Այնուամենայնիվ, այդ Հրահանգի հավելվածն ուժի մեջ է՝ մինչեւ սույն Կանոնակարգի 7(4)–րդ հոդվածով նախատեսված կիրարկող կանոնների ընդունումը:

4. 70/524/ԵՏՀ հրահանգին կատարվող հղումները մեկնաբանվում են որպես սույն Կանոնակարգին կատարվող հղումներ:

Հոդված 24

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են սույն Կանոնակարգի խախտման դեպքում պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ կանոնները եւ իրականացնում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ դրանց կիրառությունն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այդ կանոնների եւ միջոցների մասին սույն Կանոնակարգի տպագրումից հետո ամենաուշը տասներկու ամիս հետո եւ առանց հապաղման տեղեկացնում են հետագա ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 25

Անցումային միջոցներ

1. Նախքան սույն Կանոնակարգի կիրառման ամսաթիվը՝ 70/524/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն ներկայացված հայտերը դիտարկվում են որպես սույն Կանոնակարգի 7-րդ հոդվածի ներքո ներկայացված հայտեր, եթե 70/524/ԵՏՀ հրահանգի 4(4) հոդվածով նախատեսված նախնական դիտողությունները դեռեւս չեն փոխանցվել Հանձնաժողովին: Ցանկացած նման հայտի մասով որպես զեկուցող ընտրված ցանկացած անդամ պետություն Հանձնաժողովին անհապաղ ուղարկում է դույն, որը ներկայացված է որպես այդ հայտի հիմնավորում: Չհակասելով 23(1) հոդվածին՝ նմանատիպ հայտերին շարունակվում է ընթացք տրվել 70/524/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածին համապատասխան, եթե 70/524/ԵՏՀ հրահանգի 4(4) հոդվածով նախատեսված նախնական դիտողություններն ուղարկվել են Հանձնաժողով:

2. III գլխում պիտակավորման վերաբերյալ սահմանված պահանջները չեն կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք, նախքան սույն Կանոնակարգը կիրառելը, օրինական ճանապարհով արտադրվել եւ պիտակավորվել են Համայնքում կամ օրինականորեն ներկրվել են Համայնք ու շուկայահանվել են Համայնքում:

Հոդված 26

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

2. Այն կիրառվում է սույն Կանոնակարգի հրապարակման օրվանից տասներկու ամիս հետո:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

1. «Տեխնոլոգիական հավելումներ» կատեգորիայում ներառված են հետևյալ ֆունկցիոնալ խմբերը՝
- ա) կայունացուցիչներ՝ նյութեր կամ, կիրառելիության դեպքում, միկրոօրգանիզմներ, որոնք պաշտպանում են կերը մանրէներով կամ դրանց մետաբոլիտներով պայմանավորված փչացումից,
 - բ) հակաօքսիդիչներ՝ նյութեր, որոնք երկարաձգում են կերի եւ կերային նյութերի պահպանման ժամկետը՝ պաշտպանելով դրանք օքսիդացմամբ պայմանավորված փչացումից,
 - գ) էմուլգատորներ՝ նյութեր, որոնց շնորհիվ կարելի է ձեւավորել կամ պահպանել կերային նյութերի երկու կամ ավելի ոչ համատեղելի բաղադրիչների համասեռ խառնուրդը,
 - դ) կայունացուցիչներ՝ նյութեր, որոնց շնորհիվ կարելի է պահպանել կերային նյութերի ֆիզիկաքիմիական կառուցվածքը,
 - ե) թանձրացուցիչներ՝ նյութեր, որոնք ավելացնում են կերային նյութերի մածուցիկությունը,
 - զ) դոնդողացնող նյութեր՝ նյութեր, որոնք, դոնդողի ձեւավորմամբ, կերային նյութերին հաղորդում են որոշակի նյութամզվածք (տեքստուրա),
 - է) կապող նյութեր՝ նյութեր, որոնք ուժեղացնում են կերային նյութերի մասնիկների՝ իրար կապելու հատկությունը,
 - ը) ռադիոնուկլիդային աղտոտվածության հսկողության նյութեր՝ նյութեր, որոնք կանխում են ռադիոնուկլիդների կլանումը կամ խթանում են դրանց արտազատումը,
 - թ) եռակալման (շեղջաքարացման) դեմ նյութեր՝ նյութեր, որոնք թուլացնում են կերային նյութերի առանձին մասնիկների՝ իրար կապելու հատկությունը,
 - ժ) թթվայնության կարգավորիչներ՝ նյութեր, որոնք կարգավորում են կերային նյութերի ջրածնային ցուցիչը,
 - ժա) սիլոսի հավելումներ՝ նյութեր՝ ներառյալ ֆերմենտները կամ միկրոօրգանիզմները, որոնք նախատեսված են կերի կազմության մեջ ընդգրկվելու համար՝ սիլոսի արտադրությունը բարելավելու նպատակով,
 - ժբ) դենատուրանտներ՝ նյութեր, որոնք վերամշակված կերերի արտադրության ժամանակ օգտագործվելու դեպքում, հնարավոր են դարձնում հայտնաբերել առանձին կերի կամ կերային նյութերի ծագումը,

▼M2

- ժգ) միկոտոքսիններով պայմանավորված կերի աղտոտումը կրճատելու համար օգտագործվող նյութեր՝ նյութեր, որոնք կարող են կանխել կլանումը կամ նվազեցնել դրա մակարդակը, խթանել միկոտոքսինների արտազատումը կամ փոփոխել դրանց ներգործության եղանակը:

▼B

2. «Համային հավելումներ» կատեգորիայում ներառված են հետևյալ ֆունկցիոնալ խմբերը՝
- ա) ներկանյութեր՝
 - (i) կերային նյութերի մեջ գույն ավելացնող կամ վերականգնող նյութեր,

(ii) նյութեր, որոնցով կենդանիներին կերակրելիս, գույն են ավելացնում կենդանական ծագում ունեցող սննդին,

(iii) նյութեր, որոնք դրականորեն են ազդում դեկորատիվ ձկների եւ թռչունների գույնի վրա,

բ) բուրահաղորդիչ միացություններ՝ նյութեր, որոնց ներառումը կերային նյութերում ուժեղացնում է կերի հոտը կամ հաճելի համը:

3. «Սննդային հավելումներ» կատեգորիայում ներառված են հետևյալ ֆունկցիոնալ խմբերը՝

ա) վիտամիններ, պրովիտամիններ եւ հայտնի քիմիական բաղադրությամբ նյութեր՝ համարժեք ազդեցությամբ,

բ) միկրոտարրերի միացություններ,

գ) ամինաթթուներ, դրա աղերը եւ անալոգները,

դ) միզանյութ եւ դրա ածանցյալները:

4. «Զոոտեխնիկական հավելումներ» կատեգորիայում ներառված են հետևյալ ֆունկցիոնալ խմբերը՝

ա) կերի մարսելիությանը նպաստող նյութեր՝ նյութեր, որոնք, կենդանիներին կերակրելիս, ուժեղացնում են կերի մարսելիությունը՝ ներգործելով թիրախային կերային նյութերի վրա,

բ) աղիքային միջավայրի կայունացուցիչներ՝ միկրոօրգանիզմներ կամ քիմիական բաղադրությամբ այլ նյութեր, որոնք, կենդանիներին կերակրելիս, դրական ազդեցություն են ունենում աղիքային միջավայրի վրա,

գ) միջավայրի վրա դրականորեն ազդող նյութեր,

դ) այլ զոոտեխնիկական հավելումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 21-րդ հոդվածում նշված Համայնքի մեթոդաբանական լաբորատորիան Հանձնաժողովի համատեղ գիտահետազոտական կենտրոնն (ՀԳԿ):

▼M1

2. Սույն Հավելվածով սահմանված պարտականությունների եւ առաջադրանքների մասով ՀԷԼ-ին կարող է աջակցել ազգային էտալոնային լաբորատորիաների կոնսորցիումը:

ՀԷԼ-ը պատասխանատու է՝

- 2.1 դիմորդի կողմից ուղարկված սննդային հավելման նմուշների ընդունման, պահպանման եւ ընթացիկ սպասարկման համար, ինչպես նախատեսված է 7(3)(գ) հոդվածով,
 - 2.2 սննդային հավելման հետազոտության մեթոդի եւ դրա հետ կապված հետազոտության այլ համապատասխան մեթոդների գնահատման համար՝ սննդային հավելման համար թույլտվության վերաբերյալ դիմումի մեջ ներկայացված տվյալների հիման վրա՝ պաշտոնական հսկողությանը այդ մեթոդի հարմար լինելու հետ կապված՝ 7(4) հոդվածում նշված կիրարկող կանոնների պահանջներին եւ 7(6) հոդվածում նշված Մարմնի ուղղորդմանը համապատասխան,
 - 2.3 Մարմնին՝ սույն Հավելվածում նշված պարտականությունների եւ առաջադրանքների արդյունքների մասին գնահատման վերաբերյալ ամբողջական հաշվետվություն ներկայացնելու համար,
 - 2.4 անհրաժեշտության դեպքում, հետազոտության մեթոդ(մեթոդներ)ի փորձարկման համար:
3. ՀԷԼ-ը պատասխանատու է հավելման հետազոտության մեթոդների հաստատումը համակարգելու համար՝ թիվ 378/2005 կանոնակարգի (ԵՀ) 10-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան (23). Այս առաջադրանքը կարող է ներառել սննդամթերքի կամ անասնակերի հետազոտման նյութի պատրաստում:
 4. ՀԷԼ-ը Հանձնաժողովին տրամադրում է գիտական եւ տեխնիկական աջակցություն՝ հատկապես, երբ անդամ պետությունները վիճարկում են սույն Հավելվածում նշված պարտականությունների եւ խնդիրների հետ կապված հետազոտությունների արդյունքները՝ չհակասելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 882/2004 կանոնակարգի (ԵՀ) 11-րդ եւ 32-րդ հոդվածներում սահմանված դերին (24):
 5. Հանձնաժողովի պահանջի հիման վրա, ՀԷԼ-ը կարող է նաեւ պատասխանատու լինել հատուկ հետազոտություն կամ դրա հետ կապված այլ ուսումնասիրություններ անցկացնելու համար՝ 2-րդ կետում նշված պարտականություններին եւ խնդիրներին համանման եղանակով: Սա կարող է տեղի ունենալ, մասնավորապես, այն գոյություն ունեցող արտադրանքի հետ կապված, որի մասին տեղեկացվել է 10-րդ հոդվածով եւ որը ներառվել է Գրանցամատյանում՝ այն շրջանում, մինչեւ 10(2) հոդվածում նշված դիմումը ներկայացվի՝ համաձայն 10(2) հոդվածի:
 6. ՀԷԼ-ը պատասխանատու է ազգային էտալոնային լաբորատորիաների կոնսորցիումի ընդհանուր համակարգման համար: ՀԷԼ-ն ապահովում է հայտերի վերաբերյալ համապատասխան տվյալների մատչելի լինելը լաբորատորիաների համար:

7. Չհակասելով թիվ 882/2004 կանոնակարգի (ԵՀ) 32-րդ հոդվածով սահմանված՝ Համայնքի էտալոնային լաբորատորիաների պարտականություններին՝ ՀԷԼ-ը կարող է ստեղծել եւ պահպանել սննդային հավելումների հսկողության համար առկա հետազոտության մեթոդների տվյալների բազա եւ այն մատչելի դարձնել անդամ պետությունների պաշտոնական վերահսկիչ լաբորատորիաներին եւ շահագրգիռ մյուս կողմերին:

▼B

ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝ ՈՐՈՇԱԿԻ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊՐԵՄԻՔՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- ա) Զոոտեխնիկական հավելումներ, կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատներ
- երաշխավորման գործողության ժամկետի ավարտը կամ պահպանման ժամկետը արտադրության օրվանից,
 - օգտագործման ցուցումներ եւ
 - կոնցենտրացիան.
- բ) Ֆերմենտները՝ ի լրումն վերոնշյալ հրահանգների.
- ակտիվ բաղադրիչի կամ բաղադրիչների կոնկրետ անունը՝ ըստ ֆերմենտատիվ ակտիվության՝ տրամադրված թույլտվությանը համապատասխան,
 - Կենսաքիմիայի միջազգային միության համակարգում հաշվառման համարը, եւ
 - կոնցենտրացիայի փոխարեն՝ ակտիվության միավորները (ակտիվության միավորները մեկ գրամի կամ ակտիվության միավորները մեկ միլիլիտրի հաշվարկով),
- գ) Միկրոօրգանիզմներ՝
- երաշխավորման գործողության ժամկետի ավարտը կամ պահպանման ժամկետը արտադրության օրվանից,
 - օգտագործման ցուցումներ եւ
 - շղթային հաշվառման համարը
 - գաղութ ձեւավորող միավորների թիվը՝ մեկ գրամի հաշվարկով
- 3) Սննդային հավելումներ՝
- ակտիվ նյութի մակարդակը, եւ
 - այդ մակարդակի երաշխավորման գործողության ժամկետի ավարտը կամ պահպանման ժամկետը արտադրության օրվանից,
- ե) Տեխնոլոգիական եւ համային հավելումներ՝ բացառությամբ բուրահաղորդիչ միացությունների.
- ակտիվ նյութի մակարդակը
- զ) Բուրահաղորդիչ միացություններ
- պրեմիքսներում ներառման հաճախականությունը

ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հավելումների քանակը, որը բնական վիճակում գոյություն ունի նաեւ որոշ կերային նյութերում, հաշվարկվում է այնպես, որ ավելացված տարրերի գումարը եւ բնականորեն առկա տարրերի քանակը չգերազանցի թույլտվությանը վերաբերող Կանոնակարգով նախատեսված առավելագույն մակարդակը:
2. Թույլատրվում է կատարել հավելումների խառնում միայն պրեմիքսներում եւ կերային նյութերում, որտեղ, ցանկալի արդյունք գրանցելու առումով, խառնուրդի բաղադրիչների միջեւ առկա է ֆիզիկաքիմիական եւ կենսաբանական համատեղելիություն:
3. Նշված եղանակով նուրացված լրացուցիչ կերային նյութերը չեն կարող պարունակել հավելումների այնպիսի մակարդակներ, որոնք գերազանցում են լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կերային նյութերի համար սահմանված հավելումների մակարդակը:
4. Սիլոսային հավելումներ պարունակող պրեմիքսների դեպքում «սիլոսային հավելումներից պատրաստված» բառերը պետք է հստակորեն ներկայացվեն պիտակի վրա «ՊՐԵՄԻՔՍ»-ից հետո:
 - (1) ՊՏ C 203 E, 27.08.2002թ., էջ 10:
 - (2) ՊՏ C 61, 14.03.2003թ., էջ 43:
 - (3) Եվրոպական պառլամենտի 2002 թվականի նոյեմբերի 21-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2003 թվականի մարտի 17-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 113 E, 13.5.2003թ., էջ 1), Եվրոպական պառլամենտի 2003 թվականի հունիսի 19-ի որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում) եւ Խորհրդի 2003 թվականի հուլիսի 22-ի որոշում:
 - (4) ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1:
 - (5) ՊՏ L 270, 14.12.1970թ., էջ 1: Թիվ 1756/2002 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 265, 03.10.2002թ., էջ 1):
 - (6) ՊՏ L 213, 21.07.1982թ., էջ 8: 1999/20/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 80, 25.03.1999թ., էջ 20):
 - (7) ՊՏ L 40, 11.02.1989թ., էջ 27: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/34/ԵՀ հրահանգով փոփոխված Հրահանգ (ՊՏ L 237, 10.09.1994թ., էջ 1):
 - (8) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:
 - (9) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:
 - (10) ՊՏ L 86, 06.04.1979թ., էջ 30: Թիվ 807/2003 (ԵՀ) Կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):
 - (11) ՊՏ L 64, 07.03.1987թ., էջ 19: Հանձնաժողովի 2001/79/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 267, 06.10.2001թ., էջ 1):
 - (12) ՊՏ L 311, 28.11.2001թ., էջ 1:
 - (13) ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 35: Թիվ 806/2003 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 1):

(14) ՊՏ L 115, 04.05.1999թ., էջ 32: Վերջին անգամ թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(15) ՊՏ L 126, 13.05.1983թ., էջ 23:

(16) Անասնակերին առնչվող ոլորտում գործող որոշակի հաստատությունների եւ համապատասխան օղակների հաստատման ու գրանցման պայմաններն ու կարգավորումները սահմանող՝ Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 22-ի 95/69/ԵՀ հրահանգը եւ 70/524/ԵՏՀ, 74/63/ԵՏՀ, 79/373/ԵՏՀ եւ 82/471/ԵՏՀ փոփոխող հրահանգները (ՊՏ L 332, 30.12.1995թ., էջ 15): Վերջին անգամ թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(17) ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 1490/2003/ԵՀ կանոնակարգով վերջին անգամ փոփոխված Կանոնակարգ (ՊՏ L 214, 26.08.2003թ., էջ 3):

(18) ՏԵՍ սույն Պաշտոնական տեղեկագրի 24-րդ էջը:

(19) ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 10:

(20) ՊՏ L 35, 08.02.2005թ., էջ 1:

(21) ՊՏ L 229, 01.09.2009թ., էջ 1:

(22) ՊՏ L 145, 31.05.2001թ., էջ 43:

(23) ՊՏ L 59, 05.03.2005թ., էջ 8:

(24) ՊՏ, L 165, 30.04.2004թ., էջ 1: Ուղղում՝ ՊՏ L 191, 28.05.2004թ., էջ 1: